

մակ ձիոց բանակին յորում վայրի կային, եւ չոգան տարան գրոյց նմա: 11 Եւ խորհեցաւ նա առնուլ գերամակ բանակին. այնմ ուշ առնէր, եւ խնդայից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զաւրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՄանուէլն, եւ յանդիման նմին զկին նորա Վարդանոյշ խայտառակեալ իցէ: 12 Եւ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել, եւ էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին ընդ ճանապարհն՝ լերինք ինչ, որում ի բնակչացն Եղջերք կոչէն: 13 Եւ մինչ դեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդան իւրով, դիպեցան նմա ուղեւորք. յորս հարցանէր Մերուժանն եւ ասէր, եթէ ճանապարհս ի Բագրաւանդ ընդ ո՞ր երթայ: 14 Եւ ուղեւորացն տուեալ պատասխանի, ասացին. ճանապարհ ընդ Եղջերս է: 15 Եւ մեծապէս խտրեաց Մերուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարշել զուղեւորսն եւ ծեծել: 16 Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղդէութեան, զքուէս հարցանէր. եւ ոչ գոյր նմա յաջողակ յուռուրթ կախարդանացն՝ յոր յուսայրն:

17 Ապա սրտմտութեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արշաւէր, զի հնար լիցի նմա նախ ըմբռնել: 18 Եւ հասեալ ի տեղին, գերամակ ձիոց ոչ գտանէր. վասն զի յԱստուծոյ այնպէս իմն եղել իրաւունք պատրաստութեան Յայոց գնդին, զի սպարապետին Մանուէլի ամենայն Յայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամենայն երամակն ի շէն էր ածեալ. եւ նոքա դեռ որսոյ պատրաստեալ էին ի հեծանել: 19 Եւ անտի գուժաւոր հասանէր առ զաւրավարն Յայոց Մանուէլ, թէ Գիտա տես, զի Մերուժանն Արծրունի հասեալ է բազում գնդաւ ի վերայ քո:

20 Ապա կազմեցան ըստ նմին պատրաստեցան ամենայն զաւրքն Յայոց գնդին, եւ Մանուէլ սպարապետն. եւ մտին առաջի սուրբ ոսկերացն Յովհաննու, որ կայր յայնմ գեւղ, ուխտաւոր լինէին եւ խնդրէին յԱստուծոյ, զարդար դատաւորն յաւգնականութիւն կոչէին, լինել նոցա այցելու աւգնական¹: 21 Եւ անտի ի դուրս ելեալք, զտիկինն Արշակունի հանդերձ մանկամքն Արշակաւ եւ Վաղարշակաւ զնոսա եւ զիւրեանց կանանին ընդ նոսա արծակեալ, յամուր յուղարկէին ի լեռնն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարագ: 22 Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն: 23 Եւ էր նա ի տիոց տղայ. եւ ըստ մանկութեանն աւրինի, ըստ կրանից Յայոց՝ որպէս աւրէն էր՝ զգլուխ մանկտոյն, սոյնպէս ի ժամանակին գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, եւ ցցունս էր թողեալ եւ գէս արծակեալ: 24 Ապա իբրեւ ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մտրակ ի վեր առեալ Մանուէլի՝ տանջեր զմերկ

1 Օրինակ մի յաւելու՝ բարեխօսութեամբ սրբոյն